ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

13 փետրվարի 2025 թվական, N 11-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, հիմք ընդունելով 21.03.2012թ. կնքված պայմանագրով հանձնման-ընդունման 26.03.2012թ. թիվ 1 արձանագրությունը, 17.05.2012թ. կնքված պայմանագրով հանձնման-ընդունման 26.05.2012թ. թիվ 1 արձանագրությունը, «ԳԼՈԲԱԼ ՍՈՒՐՎԵՅ» դատական փորձաքննությունների ասոցիացիա ՍՊ ընկերության կողմից 22.11.2024թ. տրված թիվ Ել1024-184/1 և շարժական գույքերի շուկայական արժեքի գնահատման մասին Պ1024-184/1 և Պ1024-184/2 հաշվետվությունները և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել բաց (դասական) աճուրդային եղանակով օտարելու Ալավերդու համայնքապետարանին պատկանող ներքոնշյալ՝ թվով 2 հատ գյուղատնտեսական մեքենաները.
   1.1 «BIZON Z 058 REKORD» մակնիշի աշխատանքային վիճակում գտնվող կոմբայն-գյուղատնտեսական մեքենա, արտադրության տարեթիվը՝ 1998թ., շարժիչը՝ 265062, ամրաշրջանակի գործարանային համարը՝ 8012, մեկնարկային գինը՝ 3 580 000 (երեք միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:
   1.2 «BIZON Z 058 REKORD» մակնիշի ոչ աշխատանքային վիճակում գտնվող, որպես պահեստամասերի հավաքածու ծառայող կոմբայն-գյուղատնտեսական մեքենա, արտադրության տարեթիվը՝ 1998թ., ամրաշրջանակի գործարանային համարը՝ 8012, մեկնարկային գինը՝ 1 690 000 (մեկ միլիոն վեց հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:
2. Աճուրդի մասնակցության վճարը սահմանված է 15000 դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 %-ի չափով:
3. Հանձնարարել համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովին.

3.1 Վերը նշված գույքի աճուրդային եղանակով օտարումը կազմակերպել սահմանված կարգով:

3.2 Վճարումը կատարել ՀՀ արժույթով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
9.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
10.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ՋԱԽԱՐՈՎ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2025թ., փետրվարի 13,
Լոռու մարզ, ք. Ալավերդի